

14833



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար

Հակոբ Սիմիդյան

«31» 10 2024 թ.



ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 231 - 24

Նախաձեռնող՝

«Հալոյի Քոնսայթ» ՍՊԸ

Գեղարքունիքի մարզ, Նորափոս համայնք

Գործունեությունը՝

Իջևան համայնքի Լուսաձոր բնակավայրի

կրթահամալիրի կառուցում

Տավուշի մարզ

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵՐՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿՐԱ ԱՂԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ԲՓ № 231 - 24

« 31 » հոկտեմբերի 2024թ.

Տավուշի մարզի Իջևան համայնքի Լուսաձոր բնակավայրի կրթահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Հալոյի Քոնսալթ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն
Գործունեության կատեգորիա՝	«Բ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Տավուշի մարզ, Իջևան համայնք, Լուսաձոր բնակավայր

Ներածական մաս. «Հալոյի Քոնսալթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնահատման հաշվետվությամբ նախատեսվում է Տավուշի մարզի Իջևան համայնքի Լուսաձոր բնակավայրում կրթահամալիրի կառուցում:

Գործունեությունն իրականացվելու է Իջևանի համայնքապետարանի կողմից 2024թ. մայիսի 16-ին տրամադրված N135 ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա, անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վկայականով ամրագրված՝ 1.42 հա մակերեսով հողամասում, որի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման:

Նախատեսվող գործունեությունն իրականացվում է քաղաքաշինության կոմիտեի և Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի պատվերով իրականացվող «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցների» ծրագրի շրջանակներում:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի, 8-րդ կետի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Նախատեսվող կրթահամալիրի կառուցումն իրականացվելու է Տավուշի մարզի Իջևան համայնքի Լուսաձոր բնակավայրի 7-րդ փողոց 9 հասցեում՝ գոյություն ունեցող դպրոցի տարածքում: Նախատեսվող գործունեության նպատակն է՝ կառուցել համապատասխան ստանդարտներով և ժամանակակից պահանջներով դպրոցի նոր շենք:

Գործունեության տարածքն իրենից ներկայացնում է մասնակի կառուցապատված տարածք, որն ունի պարզ երկրաչափական հորինվածք: Տարածքում առկա են 1372.1 քմ մակերեսով կառուցապատված տարածք՝ 51.7 քմ մակերեսով կաթսայատուն և 28.1 քմ, սանհանգույց՝ 8.16 քմ:

Տարածքում առկա են մի քանի եղևնիներ, որոնք շինարարության ընթացքում պահպանվելու կերպով պահպանվելու, սահմանազատվելու են, առկա են նաև փշատեղիներ 5 ծառերով:



խոչընդոտ են հանդիսանում նախագծին և համայնքի համաձայնությամբ հատվելու են, հանձնվեն համայնքին, փոխհատուցվելու է 1:2 հարաբերությամբ: Կից գտնվում են՝ ներհամայնքային նշանակության ճանապարհ, կից տարածքներով անցնող ինժեներական գծեր և հաղորդակցուղիներ: Հարևանությամբ՝ մոտ 30 մ հեռավորության վրա, գտնվում են բնակելի տներ, հողամասեր և այլ տարածքներ:

Ուսումնասիրվող տարածքը գտնվում է տաք կլիմայական շրջանում: Բնորոշ է տաք ամառը՝ հուլիսի օգոստոսի միջին ամսական ջերմաստիճանը 21.9°C - 21.8°C է, միջին ամսական հարաբերական խոնավությունը՝ 72% : Հունվարի միջին ամսական ջերմաստիճանը 1.1°C է:

Հիդրոերկրաբանական տեսակետից ստորգետնյա ջրերը պատկանում են ծակոտկենսադատարկությունների ջրերի տարատեսակներին: Հորատման աշխատանքների իրականացման ընթացքում գրունտային ջրերը մինչև 10 մետր խորությամբ չեն բացահայտվել: Ուսումնասիրվող տարածքում Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն՝ բացակայում են:

Ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար:

Համաձայն էսքիզային նախագծի՝ դպրոցը երկհարկանի է: Կառուցվելու է նաև 2 հարկանի՝ 80 հոգանոց մանկապարտեզ:

Նոր կառուցվող դպրոցը նախատեսվում է տեղադրել հողամասի երկարությամբ՝ փողոցին զուգահեռ, ինչը կապահովի լսարանների գերակշիռ մասի հարավային կողմնորոշում: Նախատեսվում է ունենալ բացօթյա մարզադաշտ, վազքուղի, իսկ ընդհանուր տարածքը նախատեսվում է բարեկարգել և կանաչապատել:

Համաձայն տեխնիկական առաջադրանքի՝ նախագծվող դպրոցը կառուցվելու է ներկայիս դպրոցի մասնաշենքի հարակից տարածքում:

Դպրոցի կառուցման տեխնիկա-տնտեսական ցուցանիշներ են.

- դպրոցի տարածքը՝ 14 179 մ²,
- դպրոցի հզորությունը /տարողությունը/՝ մինչև 144 աշակերտ,
- մանկապարտեզի հզորությունը /տարողությունը/՝ մինչև 80 սան,
- կառուցապատման մակերեսը՝ 1999.10 մ²,
- շենքերի ընդհանուր մակերեսը՝ 3634.80 մ²,
- կրթահամալիրի ընդհանուր մակերեսը՝ 3620 մ²,
- կանաչապատման մակերեսը՝ 5645 մ²,
- բարեկարգվող տարածքի ընդհանուր մակերեսը՝ 10420 մ²,
- արևային ֆոտովոլտային կայան, 150 Վտ հզորությամբ՝ ցանկապատված,
- 400/10 կՎԱ ԼՏԵ,
- ջերմոց՝ չափսը 4x8մ (մետաղական հիմնակմախով),
- ավտոկայանատեղիներ (11 մեքենայի համար),
- մաքրման կայան /մաքրման ջրի ռեզերվուար/,
- ժամանակավոր ցանկապատի երկարությունը՝ 357.65 մ:

Համաձայն նախագծային լուծումների՝ շենքը բաղկացած է երեք իրար կցված ծավալներից՝ երկհարկանի հիմնական դպրոցի մասնաշենքից, մարզադաշտից և հանդիսությունների դահլիճի մասնաշենքից և երկհարկանի մանկապարտեզից:



Հանդիսությունների դահլիճը նախատեսված է 144 հոգու համար, մարզասրահի երկրորդ հարկի մակարդակում նախատեսված է 60 տեղանոց տրիբունա, մարզադահլիճի չափերն են՝ 24.7-18.0 մ:

Առաջին հարկում նախատեսված են դասասենյակներ, կաբինետներ և բուֆետ: Երկրորդ հարկում՝ դասասենյակներ, ինֆորմատիկայի կաբինետ, մեթոդ կաբինետ, ռազմագիտության սենյակ, հանդիսությունների սրահ, ռոբոտատեխնիկայի սենյակ և ուսուցչանոց:

Դասարանները նախատեսված են 12 աշակերտի համար: Շենքի առաջին հարկում գտնվում են գլխավոր նախամուտքը, պարետի և վարչական սենյակները: Դպրոցը ապահովված է բժշկի կաբինետով, որը կահավորված է անհրաժեշտ բժշկական կահույքով: Նախատեսված է հանդերձարաններ սանհանգույցով, մարզիչի առանձնասենյակ և գույքի պահեստ: Դպրոցի նկուղում՝ 21.6մ x 20.4 մ չափերի, նախատեսված է գրադարան, խոհանոց, բուժկետ, պահոցներ, սանհանգույցներ, էլեկտրավահանակ, ջրի ռեզերվուար և պոմպարան, ինչը կարող է ծառայել նաև, որպես թաքստոց:

Դպրոցին կից նախագծված է 2 հարկանի մանկապարտեզ՝ բաղկացած 4 հատ 20 տեղանոց խմբակային բջիջներից: Խմբերը համայրված են հանդերձարաններով, ննջարաններով, խմբակային սենյակներով, բուֆետներով և սանհանգույցով: Մանկապարտեզում նախատեսված է բժշկի կաբինետ և վարչական սենյակներ:

Նախատեսվում է կառուցել մինի ֆուտբոլի բաց խաղադաշտ՝ արհեստական խոտածածկով և ռետինե ծածկույթով, ցանկապատված գծանշումով, ֆուտբոլի դարպասներով, 127 նստատեղերով տրիբունա (մետաղական հիմնակմախքի վրա պլաստիկ նստարաններով):

Մանկապարտեզի սաների համար նախատեսվում է մանկական խաղադաշտ՝ հատակը միաձույլ ռետինե ծածկույթով, որտեղ տեղադրվելու են գործարանային արտադրությամբ խաղասարքեր, 2 հատ տաղավարներ՝ չափսը 4x4մ:

Նախատեսվում է ճանապարհի ասֆալտապատում, մայթերի և սալվածքների սալարկում մայթի բետոնե գունավոր սալիկներով, բազալտե եզրաքարերի տեղադրում խաղադաշտի և սպորտ հրապարակի հատակների իրականացում: Բարեկարգվող մասում կատարվելու է արտաքին լուսավորության սարքերի տեղադրում, արտաքին ինժեներական կոմունիկացիաների՝ ջուր, կոյուղի, ջրահեռացման համակարգի ցանցերի կառուցում: Տարածքում ռեյինֆի հարթեցման, բարելավման և որոշ տեղերի ցանկապատման պատճառով նախատեսվում է կառուցել հենապատեր: Ընդհանուր դպրոցի տարածքը ցանկապատվելու է մետաղական ցանցով:

Դպրոցի բակային տարածքի բարեկարգման աշխատանքների շրջանակում նախատեսվում է բաց մարզադաշտ, բաց մարզահրապարակ, վազքուղի, ճանապարհներ և հարթակներ:

Դպրոցի հարավային տարածքում նախատեսվում է տեղադրել արևային ֆոտովոլտային համակարգ (1200քմ մակերեսով), էլեկտրական էներգիայի արտադրության, լուսավորության և ծախսերի փոխհատուցման նպատակով՝ 175 կՎտ պիկային հզորությամբ:

Դպրոցի նախագծում հաշվի են առնվել և ՇՄԱԳ հաշվետվությունում ներկայացվել են ներքին էլեկտրամատակարարման, արտաքին և ներքին ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման ցանցերի և օդափոխության համակարգերի ինժեներական լուծումները, որոնք իրականացվելու են ՀՀ շինարարական նորմերի համաձայն:

Դպրոցի համար նախատեսվում է նոր կենցաղային կեղտաջրերի մաքրման սեյանի տեղադրում, ինչը համաձայն տեխնիկական ցուցանիշների, լիովին կբավարարի անհրաժեշտ կարիքները:



Համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմերի՝ հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար, դպրոցում ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ:

Համաձայն գնահատման հաշվետվության՝ շինարարական աշխատանքները տևելու են 24 ամիս, որի ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ և մեխանիզմներ, այդ թվում՝ աշտարակային կոունկ, բետոնատար մեքենա, եռակցման ագրեգատ, բուլդոզեր, շարժական կոմպրեսոր, տոփանիչ, էքսկավատոր, ավտոբետոնատար և այլն:

Հողային ռեսուրսների պահպանության նպատակով շինարարական նյութերը տեղադրվելու են բետոնապատ մակերեսի վրա: Շինարարական նյութերից օգտագործվելու են բետոն, քար, ամրան, ավազ, ապակի, ջերմամեկուսիչ նյութեր և այլն: Առաքումն իրականացվելու է պարբերականությամբ, որը կապահովի աշխատանքների անընդհատությունը:

Շինհրապարակում բետոնի շաղախի պատրաստման հանգույց չի նախատեսվում: Բետոնը և շաղախը մատակարարվելու են մոտակա բետոնաշաղախային հանգույցից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Շինարարության ժամանակ բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի և ստացվող ավազի ու խճի խոնավացման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար: Շինարարության ժամանակահատվածի համար ընդհանուր ջրօգտագործումը հաշվարկվել է ըստ սպասարկող աշխատողների թվաքանակի (125 մարդ), ինչը կազմում է 7.1 մ³, ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը կկազմի 1500 մ³:

Շինանյութերի ժամանակավոր պահեստավորումը, թափոնների կուտակման վայրերը և այլն, կազմակերպվելու են բացառապես նախատեսվող գործունեության տարածքի սահմաններում:

Դպրոցի կառուցումը ենթադրում է հողային աշխատանքների իրականացում՝ 4139.57 մ³ ծավալի հանույթ, որից 2062 մ³ օգտագործվելու է հետլիցքի համար, ինչպես նաև 150 մ³ բուսահող, որը պահպանվելու է շինհրապարակում, Կառավարության 1404-Ն որոշման համաձայն, և օգտագործվելու է կանաչապատման համար: Ավելացված զանգվածը տեղափոխվելու է համայնքի կողմից հատկացված աղբավայր: Հողային զանգվածն առաջանալու է մասնաշենքերի հիմքերի փորման, ներտարածքային ճանապարհների կառուցման, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցման համար նախատեսվող աշխատանքներից:

Կենցաղային աղբը, որի ընդհանուր քանակը գործունեության ողջ ընթացքում կանխատեսվում է 14400 կգ/տարի, կտեղափոխվի աղբահավաք ծառայություն իրականացնող ընկերության կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի կանաչապատում և բարեկարգում, թափոնների և վտանգավոր նյութերի հեռացում, բոլոր ժամանակավոր կառույցների ապամոնտաժում, ճանապարհների կարգաբերում: Կառուցապատման աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է նաև գործունեության ենթակա ազատ տարածքի՝ 5645 մ² մակերեսի վրա կատարել կանաչապատման աշխատանքներ՝ ներբակային գոտում, հարակից տարածքներում և ճանապարհի եզրերին: Կանաչապատման աշխատանքները կատարվելու են ծառատնկման՝ եղևնի, տույա, և սիզամարգերի միջոցով՝ համաձայն Իջևանի համայնքապետարանի հետ համաձայնագրված կանաչապատման նախագծի: Բարեկարգման և կանաչապատման նպատակով նախատեսվում է կառուցապատումից ազատ տարածքի հարթեցում և բարեկարգում, ներբակային ճանապարհների կառուցում: Կատարվելու է կանաչ զանգվածի ոռոգում՝



Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ գնահատման և փորձաքննության ընթացքում Տավուշի մարզի Իջևան համայնքի Լուսաձոր բնակավայրում իրականացվել են հանրային լսումներ, ինչի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Փորձաքննական պահանջներ

- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել գնահատման հաշվետվությամբ ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանը:

- Նախատեսվող շինարարական աշխատանքներն անհրաժեշտ է կատարել օրվա սահմանված ժամերին՝ հնարավորինս նվազագույնի հասցնելով բնակելի տարածքներում աղմուկի և ճանապարհների առավելագույն բեռնվածությունը:

- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Իջևան համայնքապետարանի հետ համաձայնեցված:

- Բետոնի տեղափոխումն իրականացնել ՇՄԱԳ-ում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:

- Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել քաղաքաշինական, արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը և պահանջները:

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

«Հալոյի Քոնսալթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Տավուշի մարզի Իջևան համայնքի Լուսաձոր բնակավայրի կրթահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական պետական փորձաքննական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝

Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի փոխտնօրեն՝

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝

Արմինե Վարդանյան